



Ա.ԿԵՏԿԵԱՆ



Ահա առի՛կ եփրատին ձայնը: Ի՞նչ կորոտաս ո՛վ եփրատ,  
Քու զաւակդ է քովէդ անցնողը, ինչո՞ւ ջրերդ մթին են,  
Քու որդիդ եմ, մոռցա՞ր զիս, մի՛ մըրկիր, մոռցա՞ր զիս,  
ես քեզի հետ կուգեմ սուրբայ, աղիքներդ կտտրէ՛...

ՍԻՆԱՐԱՆԹՕ



ԵՐԵՎԱՆ  
ԳՐԱՏՈՒՆ — ՀԱՅՅԱ  
1945 — 1945  
YEREVAN  
BOOKSHOP — HAIFA

39

891.99  
0-45

13 APR 2011

891.99  
0-45

ՈՍԿԱՆ ՕՅԱՆ

*1950*  
*Shnorhali*

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ST. NERSES SHNORHALI  
LIBRARY  
ARMENIAN PRELACY

# ԼԵԼԱԿՆԵՐ ԼԵԼԱԿՆԵՐ

Անաւասի՛կ եփրատին ձայնը: Ի՛նչ կորոտաւ ո՛վ եփրատ,  
Քու զաւակդ է քովէդ անցնողը, ինչո՞ւ չըրբդ մթին են,  
Քու որդիդ եմ, մոռցա՞ր զիս, մի՛ մըրկիր, մոռցա՞ր զիս,  
Ես քեզի հետ կուզեմ սուրալ, ալիքներդ կոտորէ՛...  
ՍԻՍՏԱՆԹՕ



ՏՊ. «ՎԱՀԱԳՆ»

1935

Ն. ՅԱԿՈԲԵԱՆ «Ամերիքըն Բրէտ»

ՊԷՅՐՈՒՔ

STEVE P.H. NAJARIAN

## ՆԱԽԱԲԱՆ

Բարեկա՛մա, քե՛զ որ սիրեցի արքիս եկեղեցիին չափ, երբ կը բանաս այս գրեցիլը, մսածե՛ այն ձեռքը որ այս եղերական տղերը իրար եղբայրացուց եւ հիմա զղջումով՝ կը յանձնե գայն քղբասուելու, ժամանակի անգուրք մասնեով:

Շատ հապանեպօրեան գրի առնուած են անոր հերոսները, առանց կարենալ արտայայտելու իրենց իրական դիմագծերը եւ պզտիկ աշխարհի մը մեջ ինկած, իրենց հակասագրին հետեւելու:

Նոր - Տարիի իրիկունն եր երբ հեռուներէն ուրախութեան երգերը կը քափեին պատահանէն ներս, անցալ գրասեղանիս առջեւ ուր եղբօր մը վիրաւոր սիրտը կար, բացաւ իր հոգւոյն կոյս եջերը, որոնք կեանք առին այս մեղաւոր արեւին տակ մեր ծո՛վ ախորժի մեկ աննշան կաթիլը մեզ բերելով:

Թեպէտ, բախտը շա՛տ բան զլացաւ մեր որք մանկութեան, բայց յետագան մեր երազներով լի կը տեսնենք, մե՛նք, հակասագրին անտովոր զուակները...:

Համբո՛յր, անդարձներու շուշան գերեզմաններուն:

Ո. Օ.



1610 - 2011

## Ա

Ու մորթուեցան պարտէզիս  
տատրակները բոլո՞ր...

Արագիւնները ճախրելով օր մը նորէն մեր աշխարհի կապոյտին վրայ կը փռեն իրնց սեւաւոր թեւերը և հայրենաբաղձի կռիւնչներով կ'իջնեն իրենց հնամենի բոյները: Մեր գիւղի գարունը իր վերջին ամիսը կը թեւակոխէր երբ առաւօտ մը, մեր թաղին ծեր արագիւր տաք երկիրներէ կը վերադառնար իր սիրելի տունը զարդարելու մե՛նք անոր աչքին փուշերը, չա՛ր տղաքը գիւղին, աքսորի տխուր ճամբան բռնած, միտ մահուան հանդէպ, կ'երթայինք մեր պղտիկ խաչերուն, որոնք թեւաբաց մեզ կ'ըսպասէին կարծես:

Բեռցուած սայլեր, նախիրներ, ձիաւորներ և անթիւ ոստիկաններ մեր բոլորտիքը կը շրջապատէին և մենք բան չէինք հասկնար այս բոլորէն: Ի՞նչ կը նըշանակեն այս ամայի ձորերը, միայնութիւնը մեր սրտերուն, պարտէզներ, այգիներ անտէր, կարծես միջոցին երգովը գինով:

— Պո՛ւմ... հրաղէնի անաւոր ձայն մը մեր լսողութեան թմբուկներուն վրայ կը շառաչէ ապտակի մը պէս: Հովիտները արձականգ կուտան ամէն կողմանէ: Մենաւոր ձորին խոտերն ու ծաղիկները կը հակեն իրենց գլուխները, աղօթքի կեցող հարսերուն պէս:

— Վա՛յ ձեզ և ձե՛ր Աստուածին որ հոգի տուաւ ձեզ... կը բարձրանայ դահիճներուն ձայնը որոնց

ձեռքին մէջ մերկ դաշոյնները իշխանական տիրակալութեամբ՝ կ'իջնեն մեր պարանոցներուն, ահեղ և կատաղի: Ո՞ւր են սա փոքրերուն ականջները, թեւերը, մատները, ոտքերն ու քիթերը: «Մայրի՛կ, մայրիկ...» բարի և անուշ աղաղակը իրենց լեզուին կը մորթուին ըրոր աղաւնիները իմ պարտէզիս, իրենց վերջին ականակները արեւին քամած:

Խոտե՛ր, սպիտակ ծաղիկնե՛ր, մատա՛ղ ձեր կարմիր պատմութեաններուն՝ որոնք հիւսուեցան օր մը երբ տիեզերքիս չար հովերը լիձերուն վրայ թառած կարապներուն զիակները կը մրրկէին:

Հէ՛յ, իմ պզտիկ թիթեռնի՛կ, ո՞ւր կը փախչիս այսպէս թեւերդ ծափելէն, վայրկեան մ'ալ սա փշատին վրայ կեցիր և դիտէ մարդ գազաններուն՝ որոնք այս արեւին բարի լոյսը կը պղծեն. սիրո՛ւն թիթեռ, կը տեսնե՞ս սա մեծղի և գէր ժանսարման որ մանուկի մը թեւէն բռնած վեր կը նետէ և զայն սուրի մէկ հարուածով երկուքի կը բաժնէ օդին վրայ՝ իր ճիչերուն մէջ:

Դուն եղի՛ր մեծ ջարդին վկան և թուփէ թուփ հնչեցուր քու սգաւոր երգդ որ սս արեան վտակներուն անձայն մեղեդին է: Իմ անուշ թիթեռնի՛կ, մի հեռանար, վերջին անգամ դիտէ՛ հոս, գիտեմ որ սիրտդ պատա՛ռ - պատա՛ռ կըլլայ այս զարհուրելի պատկերներէն. նայէ՛ սա անխիղճին «մի՛ պոռաք...» սպառնալով անոնց լեզուները դուրս քաշելով կը կտրէ և կը նետէ մեկդի:

Օր մը երբ դարձեալ կանանչանան դաշտերը, երբ քու արեւդ իր ճառագայթներուն հաղար տարուան լոյսը թափէ երդիքներուն վրայ, այն ատեն, պաշտելի թիթե՛ռ, անցի՛ր Տէր-Զօրի անապատներէն, հոն պիտի գտնես յետին և անկորնջելի գանկ մը՝ որուն ճակ-

տին գրուած է «հո՛ս, տիեզերքիս խիղճը երեսուն արծաթի ծախուեցաւ...»

Շարքը ինծի կը մօտենայ և ես կուլամ շարունակ օգնութեան կանչելով, հայրիկս, մայրիկս, քոյրերս, գիւղի տէրտէրն ու Ս. Սարգիսը: Ո՛չ ոք, ո՞ւր են արդեօք:

Այդ օրուան, այդ կարմիր օրուան ջարդին ականատես կը մնան, այն առաւօտեան պայծառ արեւն ու երամ մը սեւ թռչուններ, որոնք այնքան մօտէն կը թռչէին, գինով արիւնի հոտէն:

Մինչ ես ալ դողդղագին կ'ըսպասէի իմ վախճանիս, յանկարծ կ'զգամ ձեռք մը՝ որ ուսերուս կը զարնէ: Սարսափահար կը դառնամ ետիս. ոստիկանի մը արնիւնոտ ձեռքն է և անդին, յոգնած ձիաւոր մը կը կենան դէմս: Բարձր և արհամարոտ, դահիճին ձայնը.

— Անունդ ի՞նչ է, կեալուրի՛ տղայ.

— Երուանդ, պէյիմ.

— Զօպանութիւն կրնա՞ս ընել.

— Այո՛.

— Քանի՞ տարեկան ես, կ'ընդմիջէ ձիաւորը իր նժոյգը զսպելով որ ասդին անդին կը շարժակի, կարծես արիւնի հոտը իր ունեղբերուն ինկած է և կամ աւելի ճիչքը, եղբրական ճիչերը վիրաւորներուն, իրեն մօտաւոր և ծանօթ կուգային:

— Տասը տարեկան, հօհեհի...

— Կուզե՞ս ինծի հետ գիւղ երթալ, իբր հոգեզաւակ.

— Սիրով կուզեմ, հօհեհի՛, կը պատասխանեմ ժպտելով.


Այն ատեն դաժան ոստիկանը զիս գրկելով կը տեղաւորէ ձիաւորին ետեւ, աւելցնելով.

— Գեղի՛ կիսի, խայիճ կեավո՛ւր, ըզպալղ լաւ է եղեր, նորէն ինծի աղօթէ՛... .

Կէսօրուան արեւին տաքութիւնը կը մաղուէր աւազի այս ձորերուն և լեռներուն մէջ, երբ մենք քառասմբակ կ'արչաւէինք, մեր ետին ձգելով զուլումի և կոտորածի այս վայրը, ուրկէ դեռ ականջիս կը հասնին կարծես, ոգեվարներուն օրհասական ճիչերը.

— Մայրի՛կ... մայրի՛կ...

Այն ատեն կ'զգամ որ, ժանտաբոյր հով մը դաշտերուն մէջ կուլար, տխո՛ւր և արիւնո՛տ:



Բ

Արե՛ւ արե՛ւ, ճառագայթ մը...

Գիւզն ենք:

Առաջին օրերը, ինձ համար չափազանց տաժանեւ լի կ'ըլլան: Ժամանած իրիկունս իսկ, ճաշի կը նըստինք աղայիս — որուն անունը Մուստաֆա է — ընտանիքին հետ և տաք թանապուր մը, խոշոր հատիկներով, վայրկեանապէս կուլ կուտանք, սպասելով աւելի համեղներու և պտուղի:

— Հոս նայէ՛, ազտոտ կեավո՛ւր, ասկէ վերջ քու անունդ Օսման է, ես քու հայրիկդ եմ, ինձ հայր պիտի կոչես, կը հասկնա՞ս...

Ծերունի աղաս է, Մուստաֆան, խորամանկութեան տիպար որ 50 տարիքը կոխած է հէլա՛լ հոլա՛լ: Գովս նստեր են երկու դեռատի աղջիկներ, որոնք իրենց մինչեւ ականջնուն ծայրը կրակի պէս կը կարմըրին, երբ իմ տխուր ականարկս կը գտնէ իրենց նայուածքները:

— Օսմա՛ն, ասոնք ալ կեավուրի աղջիկներ են, հայտէ քիչ մը անոնց հետ հայերէն խօսէ՛ նայիմ:

Մէկէն, անպատմելի ուրախութիւն մը սիրտս կը լեցնէ, ձմրան արեւով. մեր հանըմին ճերմակ դէմքը կը ժպտի մեզ նայելով.

— Գուրիկնե՛ր, դոք Հայ ա՞ք.

— Այո՛, աղբարի՛կ, կը պատասխանեն միասնաբար:

— Է՛, ինչպա՞ս էղաւ, դոք հոս է՞... .

— Սո՛ւստ... կեավուրնե՛ր, հերի՛ք խօսիք, կը

պոռայ բռնակալը մէկէն մեղ սարսափի մը ճանկերուն մէջ նետելով:

Ճաշը աւարտած է և մենք դուրս ենք, չըջաբակին մէջ, հեռու անոնց չար ակնարկներէն և ծառի մը ներքեւ:

— Է՞րբ էկաք դոք հոս, քուրիկնե՛ր, կ'ըսեմ տըխուր, երկու հայուհիներուն դէմքերը լաւ մը զննելէ վերջ, որոնք կը մնան տակաւին իրենց հօրենական տարազներուն պարզութեան մէջ:

— Մեր գալը հազիւ երկու շաբաթ կ'ընէ, մեզ յափշտակեցին մօրս գրկէն. քեզի պէս անուշ աղբարիկներ ունէինք, զանոնք ալ տարին. չենք գիտեր ո՞ւր... Իմ անունս Հրանուշ է, իսկ պզտիկ քրոջս Սիրանուշ:

Կը խօսէր շատ տաք և մաքուր հայերէնով՝ որ հազուադէպ էր այն օրերուն:

— Շատ լա՛ւ, քուրիկնե՛ր, իմ անօնս ալ Երուանդ է, բայց էս չկտացայ, դոք ամէն օր էսպէ՞ս կօտէք:

— Այս մարդը միշտ թանապուր կուտէ, չափազանց աչքը ծակ, կը խօսի պզտիկ աղջիկը որ դեռ առաջին անգամ ըլլալով բերանը կը բանար. հիմայ, երբ զինքը յիշել կուզեմ, Ռաֆայելի նկարներէն, «Ս. Կոյս»ին գրկին մէջ երկու փոքրեր կան, անոնց կըրտսերին դէմքն է ճի՛շդ:

— Քուրիկնե՛ր, անանկ է նի, էս հոս չեմ կենար, կը փախչեմ:

— Ամա՛ն Երուանդ, մի՛ ըներ այդ քու մամուռ սիրո՛ւն, կը պաղատէր Հրանուշ սրտագին, այս մարդը շա՛տ անգութ է, մի՛ ըներ, հոգո՛ւր մատաղ...

— Չէմ կարող համպերէլ, քուրիկնե՛ր.

— Ոտքիդ զուրպա՛ն, Երուանդ ճա՛ն, քեզ մարդ է, կ'ըսպանէ քեզ, մի՛ ըներ այդպէս, մեզ ալ մեղքըցի՛ր քչիկ մը...

Այն ատեն կը տեսնեմ Հրանուշի աչքերը արցունքաներով լի, և կ'ապահովեմ զիրենք կենալուսովրայ:

Սեպտեմբերի առաջին օրերն են և օդը այն ատեններ բաւական պաղ կ'ընէ, մանաւանդ գիշերները: Անոնք ամէնքն ալ կ'իյնան իրենց սովորական անկողինները քնանալու համար: Ինծի ալ ցփսի մը, անկողինի և ծածկոցի փոխարէն: Ծիչդ է որ առաջին ժամերուն բան չեմ զգար, բայց երբ աղջամուղջը իր կէսին անցած, ցուրտէն կ'արթննամ ու կը տեսնեմ վրաս բաց, ոտքերս սառեր են և ամբողջ մարմնով կըլոր գունտի պէս կծկուեր, մնացեր եմ: Գետինը խոնաւ և սառ: Մարմինս երթալով աւելի կը դողդղայ: Այն ատեն ձեռքս աղային ուսին զարնելով, որ կը խորթկար, հաստ ծածկոցներու տակ:

— Պապա՛, պապա՛, քչիկ մը բան տո՛ւր ինձ. ցուրտէն կը մեռնի՛մ կոր...

— Մօ՛, կեալով՛ւր, քու պապայիդ տո՛ւնն է այս... զնա՛, կուզես մեռիր, կուզես ապրիր, մուս՛աւ շուն... վաղը աղուոր զօփայ մը ունիս քաչի՛րք, զիս այսպէս անհանգիստ ընելուդ համար:

Այս ձայներէն կ'արթննան հայուհիները և զիս կը կանչեն իրենց քով: Կէս գիշերէն մինչե՛ւ լուսաբաց, երեք հոգևով երկու պլանֆիթի տակ, զրուցեցինք, մեր անցեալները անգամ մ'ալ վերյիշելով: Այն գիշերը խօսեցաւ Հրանուշ, արցունքով:

— Մեր կարաւանը որ կը բաղկանար սգաւոր կիներէ և ինձ նման աղջիկներէ, երբ Պողազլըի ճամբայէն պիտի անցնէր, տեսանք, ճիչդ ճանապարհին մէջ տեղ, երկու մերկ կոյսերու մարմիններ, պառկած՝ իրենց ոտքերն ու ձեռքերը, կաշկանդուած հաստ պարաններով. կը չարչարուէին սոսկալի ցաւերէն և ամօթէն: Անոնց ճիչդ քով դուրսած են եօթը Ֆեսեր և գազանները կը պոռան մեզ ցուցնելով զանոնք. «հէ՛յ, մուստար կեալուրեն՛ր, մինչև այս ֆէսերը կարմիր ոսկիով չի լինան, ասոնք այսպէս մերկ, պիտի չար»

չարենք...: Մի՛րտ կը դիմանայ. մե՛նք, մինչև հոն հասած, հազար տեղերէ կողոպտուած և մարմիննիս ծածկելու շաղիկ մը հաղիւ մնացած, տուինք ինչ որ կը մնար մեր քով ոսկեղէն, ապարանջաններ, օղեր և դանազան մատանիներ, մինչև եօթը Ֆեսերուն կատարը լեցուիր: Եւ ասոնց փոխարէն, աւելի՛ չքնաղ եւ աւելի՛ թանկագին երկու կեանքեր արեւին եկան:

Առաւօտեան առաջին և բարի ճառագայթները եկեր են պատուհանէն ներս, երբ իմ մտածումս փախուստի հեռանկարներով զբաղուած է արդէն: Առանց նայելու իմ պղտիկ տարիքիս և հասակիս, կ'ըսկսիմ գաղտագողի, կամաց, կամաց, տունին սահմաններէն հեռանալ. ճահ քիչ մ'ալ, հա՛ հասար, պրավօ՛ Երուանդ» սիրտ կուտայի ես ինծի, երբ դրան առջեւ կը ցցուի աղայիս սպառնական դէմքը որ ինձ կը յառաջանայ.

— Ծօ՛, խայտառակ, հոս եկո՛ւր նայիմ, ո՞ւր կերթաս.

— Ես պիտի փախչի՛մ այստեղէն, պապա՛...

— Հոս եկուր ծօ՛, լակո՛տ, հիմայ կտո՛ր կտո՛ր կընեմ քեզ...

— Ո՛չ, ո՛չ, չե՛մ գար, կը պատասխանեմ, աղստուելուս վրայ շա՛տ վստահ. ես՛ պիտի փախչիմ... հոս լաւ չէ՛... չեմ կշտանա՛ր...: Ամբողջ ուժովս կը վազեմ դէպի ճամբան, որ հաւնոցի կողմն է: Առաւօտեան այդ պահուն գիւղը զրեթէ ամայի կ'ըլլայ. ծեր քանի մը մարդեր՝ պատերուն կոթնած կը ծխեն կամ քանի մը պառաւներ, իրիկ կը դարձնեն, դռներուն առջև կամ տանիքներուն վրայ: Աքլորներ կը կանչէին շարունակ:

— Օսմա՛ն, Օսմա՛ն... իմ անուշ զաւակս, մի՛ փախչիր, ասկէ վերջ քեզի լաւ պիտի նայիմ, քե՛ք դուն եկուր, մի՛ փախչիր, ասլան զաւակս... և ճի-

պոտ մը ձեռքին կը վաղէր հոսեւս, շարունակ պոռալով, Օսմա՛ն, Օսմա՛ն...: Ու կը տեսնեմ որ հատած են գիւղին տուները, և մենք դաշտերու մէջ ինկած, առանձի՛ն, մեր վազքին մէջ անվատ: Երբէ՛ք չէի ակնկալիր, այսքան տոկունութիւն, անոր կքած տարիքէն: Բայց երթալով շունչս կը հատնի եւ դէմս կը ցցուի մեծ զառիվեր մը, ուրկէ ստիպուած եմ բարձրանալ:

— Օղլո՛ւմ, գուզո՛ւմ, ալ կեցի՛ր, քեզի չի պիտի ծեծեմ, լա՛ւ պիտի նայիմ, քե՛ք կեցիր դուն, ճանիկդ ուտեմ, Օսմա՛ն...

Ալ բորբոքի յուսահատ և պարտասած, կը կենամ ճիշդ վերելքին տակ, հաղիւ շունչս առնելու չափ յոգնած: Վա՛յ քեզ, ծերունի՛, ո՞ւրկէ այսքան համբերութիւն: Բնական է, կը հասնի ու բռնելով ձեռքէս, շաքարի պէս անուշ բառերով կը տանի տուն: Երբ դրան սեմին եմ, կնկան առջև առիւծ կարած:

— Ծօ՛, կեա՛վուրի ոսկո՛ր, ո՞ւր կը փախչէիր, հէ՞... և այնպէս ուժգին՝ քանի մը ապտակներ կ'իջնեն դէմքիս, որ քիթս, բերանս իրարմէ կը զատուին կարծես, արլունլուայ գետին կիցնամ, մարած վիճակի մէջ:

.....

Գուք գիտէ՛ք անշուշտ, թէ երբ ես արթնցայ ո՛վ զիս վեր վերցուց և դէմքիս արիւնները լուալով, կապեց կողտութեան բացած վերքերը և իբրեւ գթութեան երկու քոյրեր, անոնք զիս մխիթարեցին և ինծի հետ լացին իմ վիշտերս: Ուրեմն, հեռաւոր այս հողին վրայ կայ եղեր, խիղճ ըսուած հրեշտակը, որ հեռու քու հայրենական օձախէզ, տակաւին քեզ չի լքեր եւ տառապանքներուդ կարեկից կուտայ, Հրանուշի և Միւրանուշի պէս, երկու ձերմակ ծաղիկներ...:

«ես ընկել եմ, անծայր դաշտում միայնակ,  
երազնե՛րս, երազնե՛րս որ անցան...»

Ո՛րքան հարազատ են այս տողերը, յիշեցնելու ինձ՝ իմ հովիւի կեանքս, որ անցաւ այն օրերուն, «անծայր դաշտերուն» մէջ, գրեթէ միայնակ, ոչխարներուն հետ գլուխ գլխի: Այս պատկերին աւելի սըրտանց իը կապուիմ, երբ ամբողջ ամիս մը կ'անցնի անցեալի այն դժնդակ պահերուն վրայ: Կամաց, կամաց, կ'ըսկսիմ ընտենալ այս ապրելակերպին: Իրար ետեւէ, այնքա՛ն արագ և անգիտակցաբար ամիսները կը յաջորդեն և օդերը աւելի եւս կը ցրտանան: Օրուան միջոցներուն, երբեմն կը նստէի, ամայի այս լեռներուն մէջ և իմ պզտիկ յիշողութեամբս, կ'ըսկըսէի, անցեալը, ես ինձի բացատրել: Ո՛ւր են հայրս, մայրս: Քոյրեր ունէի ես, հապա եղբայրս, Յակոբը՞: Ո՛ւր են մեր գեղի տղաքը, Եսթեր, Բաջիենց «Քէջէլ» Վահրիկը, որուն հետ ա՛յնքան կը կռուէինք: Հապա մեր գեղին Տէրտէրը՞, որ ամէն օր կը հանդիպէր մեր տունը և զիս տեսնելուն, բռնելով՝ զիս:

— Ա՛յ, չար սատանա՛յ, նորէն տունը տակն ու վրայ ըրեր ես, ապա ականջներս քաշելով, պիտի պատժե՛մ քեզ... հասկցա՞ր... քեզի՛ գազա՛ն... յետոյ մօրս դառնալով, Սուրբի՛կ, շատ չարութիւն կընէ՞ այս գազանը, պիտի պատժե՛մ զինք... այն անեն ես կ'աշխատէի իր ձերմակ մօրուքը բռնել, որը հազիւ կ'ազատէր ձեռքէս, զիս գրկէն վար դնելով, վա՛յ քեզ: սատանի պո՛չ...:

Ծո՛ւխ և մոխի՛ր: Անուշ օրե՛ր:

Ոչխարները կամաց, կամաց, կը հեռանային երբ ես այս տեսիլներէն կ'ըսթափէի և կ'իյնայի անոնց ետև: Այն օրերուն՝ վրայ կը հասնի սաստկաշունչ ձմեռը: Դաշտերը, երգիքներն ու ճամբաները կը ծածկուին, ձիւնէ ձերմակ թուղթի մը ներքեւ տխրագի՛ն: Ամբողջ ժամանակ կ'անցնէի կովերուն ոչխարներուն մէջ զանոնք կերակրելով գոմին մէջ քանի որ արօտատեղիները մեռած են:

Սովորական երեկոյ մը դարձեալ, մէկէն կը լսեմ ու կը տեսնեմ գոմին դրան վախկոտ բացուիլը: Փուքը ներս կ'իյնայ իր լայնկեկ թեւերով և սպառնական: Ահա երկու ստուերներ լոյսին մէջ կը գծուին վայրկեան մը և ապա դրան կղպումը իր եղբրական երգին հետ: Ովքե՞ր են անոնք և ո՛ւր կ'երթան այս սառոյցէ գիշերով՝ ուր մարդ գոց պատուհանի մը առջեւ կենալէն իսկ սարսափ կզգայ: Այս հարցումներուս պատասխանը կուգար յարդանոցէն մռնչող հովերուն սաստիկ ձայնով, վո՛ւ... վո՛ւ...:

Սիրտս չի կենար իր կաղապարին մէջ. բլբլբիս վրաս կը քաշեմ և կը բանամ այն դուռը ուրկէ քիչ առաջ մեկներ էին անծանօթ և տարօրինակ շուքերը: Հովին սաստկութենէն, քիչ էր մնացած գետին պիտի իյնայի, եթէ պատին չկռթնէի: Ո՛վ կրնար այս ժամուն դուրս ելլել. հազիւ երկու լոյսի, շատ հիւանդ լոյսի, պլպլացում կար մութ գեղին մէջ: Ո՛ւր էին միւս ճրագները: Կը նշմարեմ երկու անծանօթները որոնք ձիւներու վրայէն, հապճեպ քայլերով, գրեթէ իրար փակած, կ'արշաւէն դիմացի բլուրը: Այո՛, հիմայ ձանչցայ զանոնք իրենց քալուածքէն, բայց ո՛ւր կ'երթային: Ահա կը կորսուին անոնք, իրենց գորշի զարնող հագուստներուն մէջ և կը լուծուին միջոցին մէջ, անլուսին և սգաւո՛ր... Կը հետեւիմ իմ կարգիս ա-

նոնց հետքերուն որ գէպի լեռ կը տանի և այն բլու-  
րը, որ գեղին վրայ, իշխանի մը պէս կը հակէ գեռ:  
Ճիշդ այս տեղէն է՝ որ ես իմ ոչխարներս մարագ կ'ի-  
ջեցնէի արեւ օրերուն: Ճերմակ բարձունքին վրայ կը  
կենան անոնք... կը ծոին միասին՝ գետին, նստելու  
գիրքին մէջ: Օ՛, կը յիշե՛մ, հոն կը տեսնէի ամառ օ-  
րերուն, մեծկակ ձերմակ քար մը, հաւանաբար գերեզ-  
մա՛ն մը հիմայ... աւելի կը յառաջանամ, միշտ պա-  
հուած:

— Հոս էր. քոյրի՛կ ջան, անոր գերեզմանը, չէ՞...  
— Այո՛, անուշ քոյրի՛կս... իմ պզտիկ քոյրի՛կս  
... ճիշդ հոս թաղեցին զայն... ահա քարը... քիչ  
մ'ալ փորէ՛, անո՛ւշս...

— Արմէ՛ն, Արմէ՛ն... կը պոռային միասին, բայց  
վախկոտ և ի՛նչ եղերական կանչ, ո՛վ Տէ՛ր, այս ան-  
ծայր ձիւներուն մէջ:

— Աղօթե՛ք, քոյրի՛կ, ... բայց ի՞նչու կուլաս,  
Սիրանո՛ւշ, բարի հրեշտակ...  
— Հապա գուն ի՞նչու կուլաս... ինչո՞ւ ինչ... ո՛ւ...  
Երկուքը մէկ, այդ հողին վրայ պառկելով կուլային,  
իրենց վշտին մէջ անմխիթար և կանչելով միշտ «Ար-  
մէ՛ն, Արմէ՛ն»:

— Ե՛լ, քոյրերդ ենք, նայէ՛ մեզի... խաչը բե-  
րինք, կուրծքէդ կախելու... անուշի՛կ աղբար, ե՛լ,  
նայէ՛ մեզ...  
Յաջորդ օրը, երբ այս մասին Հրանուշէն բացատը-  
րութիւն կը պահանջեմ, քիչ մը կը զարմանայ գլտակ-  
ցութեանս և ապա՝ կը պատմէ իր պզտիկ քրոջը երա-  
զը ուր իրենց գեղի քահանան երեւալով, կը պատուիրէ  
իր վզէն կախուած Գրիստոսի ոսկեզարդ խաչը գետե-  
ղել, իրենց մեռած եղբոր գերեզմանին մէջ:

Այն ատեն, ինքնիրենս կը հարցնէի, հոս չէ՞ր,  
ճիշդ այստեղ, գարուն օրերուն երբ ոչխարներս կ'անց-  
նէի, ճիշդ այս քարին շուրջ, ուր այնքան բազմաթիւ  
լեւակներ կային, կարծես բարի ձեռքի մը կողմէ խը-  
նամուած: Կը փրցնէի ամէն անգամ հատ մը և թեր-  
թիկները հովին կուտայի, այդ արիւնոտ թերթիկները:  
Լեւակնե՛ր, լեւակնե՛ր... կարմի՛ր լեւակնե՛ր...:

7

Օրին մէկը, բարի հանրմ մը, իր սրտին հայելին,  
տաք շրթներով, այտերուս վրայ փշրեց...

Կը հասնի ցանկալի գարունը մեր երկիրներուն:  
Ձիւները հալած և առաջին ծաղիկները իրենց բաժակ-  
ները արեւին բացած, կը ժպտին նոր հարսերու պէս:  
Ծիծառներն ու արագիւնները դարձեր են իրենց բոյնե-  
րը: Գարուն է ամէն ինչ, գարուն գեղեցիկ:

Ուրեմն, հասեր է ժամանակը, իմ նախկին կեան-  
քիս թելը ձեռք առնել և ոչխարներով բարձրանալ լեռ-  
ները, իմ անմոռանալի ժամե՛րս...

Իիպուած մը սակայն կը փոխէ կեանքիս գետը:  
Օր մը նորէն, գիւղէն շա՛տ հեռու, լեռներուն, բա՛րձր  
լեռներուն մէջ էի: Ժայռերուն, մութ քայրարներուն  
մէջէն վեց—եօթի չափ պաշարպուլներ կուգան և իմ  
ոչխարներէս տասի չափ առնելով, կ'անհետին դարձեալ  
իրենց լեռնային ապաստարանները: Ասոնք, այն ա-  
տենուան թուրք անիշխանականներ էին որոնք զին-  
ւորութենէ փախչելով, քարայրներու մէջ կ'ապրէին  
կողոպուտով:

— Ուրեմն Երուսա՛նդ, պէ՛տք է փախչիս, քանի  
որ յանցանքի մէջ չես կրնար ներկայանալ տուն, պէ՛տք  
է փախչիս, կ'ըսէի ինքնիրենս: Կը ձգեմ մնացեալ ե-  
րեսունի մօտ ոչխարներն ալ իրենց բախտին և կը բռու-  
նեմ անծանօթ ճամբայ մը, որ մեր գեղին չէ բնա՛ւ:  
Արեւածագէն առաջ կը հասնիմ գիւղակ մը, աւելի  
դաշտային զիրքով:

1610-2001



Հոս շուտով ծառայութեան կը մտնեմ — այգիի պահակ — տան մը որուն միակ այրը աճապարանքով զինուորութեան կ'երթայ: Կ'անցնին քանի մը օրեր այգիի մէջ, միշտ գոհ ես ինձմէ և հանրմէս որ բարի է աղանիւրի պէս: Սակայն առաւօտ մը, սարսափով կը տեսնեմ նախկին աղաս, Մուստաֆան՝ որ այգիի մէկ ծայրէն ինձ կը յառաջանայ հանրմիս ընկերակցութեամբ: Սիրտս դող կ'ելլէ. յիշեցի ոչխարնե՛րը... անտէր լեռներո՛ւն մէջ... չեթե՛նե՛ր...: Այո՛, ան է, ան գութ ծերունին, նոյն քալուածքը, նոյն ոճրապատ դէմքը որ կը կանգնի դէմս բայց մեղմ և ձեռքին մէջ մէջ բռնած, որթատունկի հաստ կոճղ մը՝ ցցուածքներով:

— Հայտե՛ նայիմ, Օսմա՛ն, ինձի հետ նորէն գեղ պիտի երթանք:

— Եթէ զիս մեռցնելու ալ ըլլաս, չե՛մ երթար հոն, կը պատասխանեմ հաստատ և անվախ կերպով, վատան թէ, հանրմը զիս պիտի պաշտպանէ, մինչդեռ, ես տեղեակ չէի բնաւ թէ, անոնք իրարու ազգական կ'իյնան:

— Օղլա՛ւմ Օսմա՛ն, մի՛ ըներ, քալէ՛ ինձի հետ, սայլը հոն կ'ըսպասէ մեզ, Հրանուշն ու միւս պզտիկը միշտ քեզ կը հարցնեն, ես քեզի նորէն պիտի նայի՛մ առաջուրնէ աւելի լաւ, քու տեղդ ուրիշ հովիւ մը գրտած եմ, դուն մեր պաղիճ մէջ այսպէս պահակ պիտի կենաս, հայտե՛ նայիմ, ապա՛ն գաւակս...

— Ձէ՛, անկարելի՛ է, կը սատկի՛մ, նորէն չեմ գար ձեր գեղը:

Հանրմը միշտ լուռ մտիկ կ'ընէ:

— Վա՛յ, քու պապուդ ոսկորները ես...: Մուճար քեզի՛... և ձեռքի որթատունկի, հաստ և սեւ կոթով, երկու անգամ ճիշդ դէմքիս իջեցնելով:

— Ա՛ն, ա՛ն... քեզի՛ կիտի խայիճ կեպովո՛ւր:

Անկասկած թէ արիւններու մէջ գետին կ'իյնաս մարած: Չեմ գիտեր ո՛րքան ատեն կը մնամ այս վիճակիս մէջ, երբ կ'արթննամ, քիթս, ճիշդ հոս կզակնես, այս սպիները կը տէսնէ՞ք, ամբողջ արիւնի մէջ: Գլխուս վերեւ դեռ կեցեր է հանրմը, առաջուան պէս անխօս և կարեկցոտ աչքերով լի, ապրելուս վրայ վրահատ...:

— Տղա՛ս, քեզի չեմ ստիպեր որ այդ մարդուն տունը երթաս, քանի որ չես սիրեր, սակայն ես ալ չեմ կրնար պահել քեզ, անոնք մեզի ազգական են և կը վշտանան, միայն, սա ճամբան բռնէ և գնա՛, գնա՛ չիտակ, հոն, ուրիշ գիւղ մը կայ, անոր ընտանիները շատ բարի են և քեզ կը խնամեն...:

Գիտովի նման ճամբայ կ'ելլեմ և հագիւ այգիի կորսնցուցած, ցաւերուս տոկալու անկարող, ճամբու եզերքին, խտտերուն վրայ կ'իյնամ նորէն: Այս անգամ ալ նախախնամութիւնը երկարեց իր ձեռքը, իմ լըքուած և տխուր վիճակս դարմանելու:

Ի՛նչ անուշ բան է, տառապանքի մէջ քնանա՛լ, քնանա՛լ շարունակ, տեսնել հայրենի տո՛ւնդ, մայրդ, որ քեզ կը գրկէ կարօտագին և հին ծանօթ բոլո՛ր, բոլո՛ր դէմքերը...:

Երբ աչքերս կը բանամ, Հրանուշի և Սիրանուշի հրեշտակային դէմքերը վրաս հակած, տխրագի՛ն, կուլային կարծես: Նորէն լուացեր, մաքրեր և կապեր էին վէրքերս: Ուրկէ ո՛ւր, երազի պէս, նորէն հոս եմ ինկեր: Ճամբուն վրայ աղախ մարդիկը ճանչնալով զիս, սայլին մէջ դրեր, առանց իմ գիտակցութեանս, բերեր էին այս ստելի և վաղնջական տունը:

Մեծ լուծիւնը զիս կը կանչէ...

Այնուհետեւ, իմ գործս եղաւ, այգիի մէջ պահակ մնալ, ամբողջ ամառուան ընթացքին: Կեանքը նորէն կը զարնէ իր թեւերը և ամենօրեայ աստղերը նորէն կը ծագին ու կը մարին:

Հրանուշի հասակն ու գեղեցկութիւնը երթալով, ծաղիկի մը պէս կը բացուէր: Մազերը ոսկեգոյն փայլ մը միշտ կը պահէին իրենց վրայ, իյնալով ուսերուն երբ ան առաւօտները կը սանտրուէր: Մանաւանդ իր նայուածքին մէջ կարելի է փնտռել անոր ամբողջ վայելչութիւնը: Ամէն օր, անոր մէկ անյայտ, գեղեցիկ և պահուած սիրունութիւնը երեւան կուգար: Իր նայուածքին բոլոր խորութեամբ, կը նայէր ինձ յաճախ, իմ վէրքերուս ցաւը թեթեւցնելու զիտուժով:

Օր մը, մեր գրացի, Տավուտ պէյը, ներս եկած, ծերուկ աղախ հետ սակարկութիւն մը կը վերջացնէին: Կարծեմ թէ՛ եօթանասուն դեղինի կը զարնեն հանգոյցը: Խեղճ Հրանուշ, ոչի՛նչ, ոչի՛նչ գիտեր տակաւին: Կը ճանչնայի այս անբարոյական պէյը որ իր կանանոցին մէջ մօտ տասնըհինգի չափ Հայ աղջիկներ կը պահէր և հիմայ, կուզէր ուրիշի մը ևս տիրանալ: Այն ատենները չէի հասկնար թէ ի՞նչու կը փափաքէր Հրանուշի:

Ամէն բան կը պատմեմ աղջկան և կը համոզեմ որ ընդունի, քանի որ մեր չար աղային ձեռքէն ազատելու միակ միջոցը այն է: Երբ կը լսէ իմ խօսքերս,

գոյնը դեփ-դեղին, մարելու կամ իյնալու վախով, կուլայ:

— Չե՛մ ուզեր, չե՛մ երթա՛ր, անկարելի՛ է... .

Տարօրինակ բան, կը մտածէի ես ինձի, աշխարհիս է՛ն գէշ մարդն ալ նորէն մեր աղայէն նախընտրելի չէ՞ր:

— Պիտի փախչի՛մ, Երուանդ, պիտի փախչի՛մ... .

Համոզելու բոլոր ճիգերս ապարդիւն: Իրիկուան ձաշին Հրանուշի բացակայութիւնը Մուստաֆային ջիղերը կը լարէ: Մեր բոլոր փնտռողները իզուր... . չկա՛յ ու չկա՛յ: Գիշերը ուշ է արդէն:

Այն ատեն, ճիշդ տան առջեւ թեւէս բռնելով «ծերուկ աղուէսը» խանչաբը մե՛րկ, ձեռքին մէջ, դողացող չրթներով և ակռաները իրար ծեծելէն.

— Մօ՛, իշու դաւա՛կ, ասիկա քու գործդ է, դուն գիտե՛ս տեղը, կամ կ'ըսես հիմայ վայրկեանս պէս, կամ քեզ հիմայ կ'սպաննե՛մ... . և դանակը կը դնէ կոկորդիս: Մունկի եմ եկած և լո՛ւտ, զոհուելու:

— Չէ՛, աղա՛, հողուդ ես դուրպա՛ն, վալլա՛ն կըսեմ, չեմ գիտե՛ր... . չեմ գիտե՛ր, աղա՛... . կ'ուլայի: Կ'երթաս կոր հա՛... . մէ՛կ... . երկո՛ւ... . չո՛ւտ, պիտի ըսե՞ս... .

Դանակը կոկորդիս վրայ պրկուած, մէկ շարժումի, մէկ հրամանի միայն կ'ըսպասէր. կեանքս մազէ մը կախուած, «երեք» մը միայն... . լինցա՛ւ... .

Ամառ գիշեր, զով օդեր. միջոցին մէջ Չղջիկներ կը չըջէին և քանի մը շունի ձայներ կը հասնէին միւս թաղերէն:

Մէկէն, երրորդ ստուեր մը՝ մեր մէջտեղ կը նետուի կայծակի պէս և անոր ձեռքին դանակը բռնելով.

— Ինձի զա՛րկ, ինձի զա՛րկ, պապա՛, ան յանցանք չունի՛... .

Սիրանուշն է, անձնագոհութեան մեծ հրեշտա-

կը, որ ոճիրին դանակը կը կասեցնէ իր արցունքին և արիւնին գնովը: Բարի աղջի՛կ, մատաղ աղջի՛կ, հազա՛ր երանի՛ այն մօր, որուն ստինքներուն կաթին մէջ, զոր դուք խմեցիք, ինկած է կաթիլ մը արցունք, խաչեցեալին աչքերէն, երբ ան, իր փայտին ներքե կը բարձրանար լեռ, համայն աշխարհի փրկութեան զոհուելու:

Չափազանց զգածուած այս ժեստէն, ծերունին իր սրտին պիտի մխէր գուցէ այդ դանակը, եթէ չառնէին իրմէն դժուարաւ:

Սոստում տուի ելեք օրէն գտնել և բերել մեր Հրանուշը:

Կ'անցնին օրերը իրար ետեւէ:

Երրորդ օրուայ իրիկուան ժամին, ձեռնունայն և տխուր քայլերով, ո՛ւր երթալս շուար, ոճիրի գեղին կը մօտենամ: Ուրեմն պիտի մեռնէի այս երեկոյ այս անձանօթ վայրին մէջ, առանց վրաս լացող մը ունենալու: Ի՛նչ տխուր բան է, փակել աչքերը, հեռու սիրելիներէդ և անհարազատ հողի վրայ: Պիտի մեռնէի՛... պիտի մեռնի՛մ ուրեմն, իմ յետին թշուառութեանս մէջ բոլորովին առանձի՛ն...: Երեք օրեր շարունակ, թափառեր եմ անօթի և ծարաւ, գիւղէ գիւղ, և հիմայ, իմ որոնումիս մէջ խարուած, գերեզմանիս կը դառնամ: Եւ յոգնաբեկ և մոլար քայլերս զիս կ'առաջնորդեն այն այգին, ուր ցերեկները պահակ կ'ըսպասէի: Կը նստիմ ան խրճիթին մէջ տխրագին, զոր ես շիներ էի ինձի, արեւին դէմ հովանոց:

— Պիտի մեռնի՛մ, պիտի մեռնի՛մ, կը կրկնէի ես ինձի, քանի որ մորթուելու պայմանաւ երեք օրեր տրուեր էին ինձ: Ի՞նչ է մահը, ես դեռ չէի գիտեր...:

Ելած է լուսինը իր կլոր անիւով և երկինքին, այս Օգոստոսի գով երկինքին սիրտը վառած: Ուշ գիշերուան մէջ դեռ արթուն, հեռաւոր կանչերը մտիկ կ'ընէի:

Գիւղին լոյսերը կը պլպլային շա՛տ, շա՛տ հեռուն: Ճպուռները կը ձգեն իրենց միօրինակ երգը և անհատնո՛ւմ: Բարեւներ և վերջի՛ն բարեւներ հեռաւոր բըլուրներուն բոլոր ծանօթ, եղբայրօրէն սրտագին: Կարծես, մարած ձայներ, գիւղէն զիս կը կանչեն անուսովս:

— Երուանդ, Երուանդ:

Բայց ես կը սոսկա՛մ այս միայնութեան սարսափէն, կը սոսկա՛մ մանաւանդ լուրթեան մե՛ծ աղմուկէն:

Յանկարծ, բաւական հեռուէն, խշրտուք մը զիս վախով տեղս կը գամէ: Գաղա՞ն մըն է թէ օձ մը ահարկու, որ եկեր է ցաւատանջ հոգիիս ջուրերը ալեկոծել: Ուշադի՛ր, դէպի աղմուկին կողմը կը նայիմ զարհուրանքով: Ղարձեալ, աւելի մեծ խշրտուք մը, բան մը կ'իյնայ գետին... ուշադի՛ր... ո՛ւր փախչիմ, ով Տէ՛ր, ահա՛ ձերմակ ստուեր մը, պահպանէ՛ զիս, Գաբրիէլ հրեշտա՛կ, ծուռկի եկած է սպիտակ ուրուականը այգիին մէջ և երկու ձեռքերը իրար միացուցած, կ'աղօթէ՛... Չքնա՛ղ իրիկո՛ւն, սուրբ գիշե՛ր, հրա՛ջօքի ժա՛մ... անս կը լսեմ անոր ձայնը...:

— Տէ՛ր իմ Յիսուս, փրկի՛չ աշխարհի, ազատէ՛ զիս անոնց ձեռքերէն, կը պաղատի՛մ քեզ սրտանց, Սիրանուշն ու Երուանդն ալ երջանիկ ըրէ՛...:

Աւելի չի կրցայ համբերել երբ իմ և Սիրանուշի անունները կը հնչուին, ուրախութեանէս և սաստիկ յուզումէս, ցատկեցի դէպի աղօթող հրեշտակը և գիշերուան հանգիստը պատռելով՝

— Հրանո՛ւշ, Հրանո՛ւշ...:

Չայնիս անակնկալէն գետին կիյնայ՝ մարմարի պէս այդ ձերմակ սիւնը, որ մարդկութեան ազնուութիւնը կ'անգնեցուց հոս:

Նորէն ամէն բան կը խորասուզուի իր մէջ և մե՛ծ հանդարտութեան լռիկ երգն է միջոցը լեցուցեր:

Հոգիս աւերակ է, կարօտագի՞ն կանչերէ...

— Երուանդ, քեզի պարտականութիւն կը ձգեմ, պարտականութիւն մը զոր խղճիդ բոլոր ձայներուն դիմադրելով, կ'ուզեմ որ գլուխ հանես: Հիմայ աւելի խելահաս ես, քան նոր եկած ատենդ և կրնաս տրամաբանել, ճիշդն ու սխալը զատել. կը հաւատամ քեզ, բոլոր սրտով:

Հրանուշի վերջին խօսքերն են ասոնք, որոնք իր լեզուէն մէկիկ մէկիկ կը թափուին այն առանձնասենեակին մէջ, մասնաւոր արտօնութեամբ կը խօսէր ինձ և Սիրանուշի, մեկնումէն վեց ժամ առաջ: Այս խօսքերը երբ կ'արտասանէր, հոգին լեցուած և արցունքի խոշոր կաթիլներ վար կուգային շարունակ: Ես այս խօսքերէն բան չէի հասկնար տակաւին, բայց իր լացը, այդ անդադրում արցունքները սիրտս կը ճմլէին, ինքզինքս վտանգի մը առջեւ կը կարծէի և ես ալ պատրաստ էի իրեն պէս արտասուելու: Ապա ձեռքերս իր փափուկ մատներուն մէջ.

— Կը յիշե՞ս, Երուանդ, այն իրիկունը այգիի մէջ, երբ զիս աղօթքի պահուս անակնկալի բերելդ... վստահ եղի՛ր թէ, ես այն օրը, քու աղաչանքներուդ վրայ է որ ետ դարձայ, որովհետեւ քեզ և քոյրս կը չարչարեն հղեր, գիտէի գլխուս պայթելիքը...

Լռիկ մնջիկ մտիկ կ'ընէի, առանց բառ մը կարենալ արտասանելու, միշտ գլուխս դետին հակած. ի՞նչ կըրնայի ընել, ի՞նչ բառերով կրնայի մխիթարել զայն.

— Մի՛ լար, իմ պզտիկ քոյրս, Սիրո՛ւժ... ես հոս եմ դեռ և քեզի հետ, մի՛ լար հրեշտակս, և սեղմելով զայն իր կուրծքին լալագին, մի՛ լար, Սիրո՛ւժ, մի՛ լար, հոս ե՛մ դեռ... յետոյ քիչ մը ուժ առնելով.

— Երուանդ, ինձի պէս չեմ ուզեր որ դժբախտ ըլլայ Սիրուժն ալ, ի՛նչ ընես ըրէ, զայն հոս մի՛ ձգեր, փախէ՛ք այստեղէն կամ Սթամպուլ և կամ Իզմիր...: Տո՛ւր ձեռքդ վերջին անգամ, համբուրե՛մ զանոնք, մեկնելու ժամս կը մօտենայ... պիտի երթամ... հեռու տե՛ղ... ձեռքե՛րդ...

Համբուրելէ աւելի, արտասունքի տաք կաթիլներով կ'ողողէ զանոնք և դժուարաւ զանոնք ետ քաշելէս վերջ, կուրծքին նորէն սեղմեց Սիրանուշը. կը համբուրէ երեսները, մագերը, ձեռքերը, աչքերը և հագուստները, միշտ կրկնելով զրեթէ.

— Սիրո՛ւժ, վերջին անգամ է այս... չպիտի տեսնեմ քեզ ասկէ վերջ, Սիրո՛ւժ, իմ հրեշտակս, վաղը կամ այսօր կորսուած եմ...

— Ո՛ւր կ'երթաս, քոյրի՛կ, ես ալ պիտի գա՛մ քեզի հետ, ես ա՛...լ... կը հեկեկար Սիրանուշ, նըռան պէս կարմիր.

— Հնազանդէ՛ մեծ եղբօրդ՝ Երուանդին, անոր խօսքէն դուրս մի՛ ելլեր...

Երեքս ալ կուլայինք և մեր լացը փրթած, մեր սրտին անկեղծ խորքերէն, կուգար այս աշխարհիս անիրաւութիւններն ու լրբութիւնները սրբել:

— Պիտի կորսուի՛մ, երջանիկ եղէք դո՛ւք, անուշ ընկերներ՛ր, մնա՛ք բարո՛վ... մնա՛ք բարո՛վ...:

\*  
\* \*

Կարծես տարիներ չեն անցած, դեռ երէկ էր, գեղին մեծ հրապարակը թափուած անոնք, ծափ կը զարնեն և կը պարեն և ի՛նչ սքանչելի խաղ և ի՛նչ խանդավառ հարսնիք: Գեղը, իր տան առաջին քարը դըրուելէն ի վեր, այնքան հարսնեւորներ և փառաշուք խրախճանք չէ տեսած, իրենց խոստովանութեամբ իսկ: Հոն են գեղին տղաքը, ուրախ, ցատկելու միշտ պատրաստ:

Մեր գեղը լեցուեր են, մօտակայ գեղին բոլոր մարդիկը, որոնք եկեր են հարսը տանելու իրենց ամենագօրին՝ Հասան Չավուտին, որ սրտակիցն է Տաժուտ պիլին: Ձեռանուագներով Ձերքէջ աղջիկներ, իրենց բարակ մէջքերով և գրաւիչ տարազներով կը պարեն այնքան մեղանուշ, կարծես իրենց ոտքերը գետին չեն դպիր և ժամեր շարունակ:

Մի՛ պաւեր, մի՛ ցասկիր, աղջիկ Չեբեգի.  
դուն վարդ ժողովի՛ր ես ծաղիկ նարգիզի.

Ահա ձիււորներուն է հիմայ կարգը.

— Միջա՛ն բացէ՛ք, միջա՛ն բացէ՛ք, կը պոռան ամենուրէք և քիչ առաջուան պարտեղը վայրկեանի մը մէջ կը վերածուի ձիարանի և կտրիճներ սրարչաւ մէկ առ մէկ կ'անցնին ժողովուրդին առջևէն, ամէն մէկը իր ճարպիկութիւնը ցուցադրող փորձով մը: Ահա կը մօտենայ խաղերուն ամենահետաքրքրականը, «Հարս

փախցնելու խաղը: Հանդիսականներու մէջտեղ կանգնած է հարսը, բոլորովին ճերմակ և երեսները չղարշով մը փակ: Անհամբեր, կարծես իր վախճանին կ'ըստ պատէ և կարելի է տեսնել անոր տխուր դիմադիծը առանց բա՛ռի, առանց ժպիտի՛... .

— Հէ՛յ, հա՛ եկան, փախէ՛ք, միջա՛ն բացէ՛ք, հարսը պիտի տանի՛ն, փախցնե՛ն... [միջա՛ն բացէ՛ք. հէ՛յ, ճամբա՛յ ճամբա՛յ... : Կը գոռայ նորէն ամբողջ և ամէն ակնարկ, սեւեռուած է հարսին որ իր կարգին քանի մը քայլ առջև անցած, բայց միշտ լսիկ և տըխուր աչքերով: Ահա խուճբ մը ձիււորներ կրակի պէս կը սուրան յառաջ, դէպի հարսը և դայն ակընթարթի մը մէջ վեր առնելով, քառասմբակ կ'արշաւեն, գիւղէն դուրս՝ բաց դաշտերը ու անոնց ետեւէն տեղին հեծեալները, հրացան պարպելով, իբր հետապնդող:

— Ճերմակ ձիււորը տարա՛ւ, ճերմակ ձիււորը, Հասան Չավուտ... .

Կը խօսէին մեր գեղացիք, երբ արդէն ժամ մը անցած էր հարսին մեկնումէն:

— Կեալուրի աղջիկ չէ՞ր ան, Հրանո՛ւշը... : Բայց Հասան Չավուտ ուրկէ՞ կը ճանչնար դայն. յետոյ աղջիկը միւսլիմ եղած էր. կ'աւելցնէ գէր թուրք մը:

— Տաժուտ պիլ դայն՝ 100 դեղինի ծախսց, կը պատասխանէ ուրիշ մը:

— Փա՛ռք Ալլահին, վերջապէս մոլորած մը կեանքի բերի, նայէ՛ որ միւս պզտիկն ալ դրախտիդ մօտենայ, ո՛վ մեծ մարդարէ՛... .

Մուստաֆան է, չըջապատուած քանի մը ձերերէ և չափազանց գոհ:

Է

Գերեզմանիս շուրջ լիակներ ցանեցէ՛ք, որովհետեւ մանկութիւնս, անոնց մէջ անցուցի...

Հրանուշի մեկնման յաջորդ օրը աղուոր արեւ մը, առատօրէն, լեռներուն և գիւղերուն վրայ թափուած է իբրև ոսկի փոշի: Ամենօրեայ կարասիները, վայրերն ու ծանօթներուն վրայ տիրութիւն մը կայ կարծես. այսպէս է յաճախ. երբ մարդիկ ինքզինքնին լքուած և թախծոտ կզգան, իրենց շուրջ գտնուած բոլոր իրերն այլ այդ ըոպէին անպայման սգաւոր կը տեսնեն:

«Պիտի կորսուի՛մ, պիտի կորսուի՛մ» պարզ նախադասութիւն մ'է այս որ ինծի համար անիմաստ կուգար, քանի որ տակաւին ո՛չինչ գիտէի և ո՛չինչ կը հասկնայի բաժանումէն:

Նստեր եմ առանձին և իմ տհաս մտքովս կը չափեմ այն մեծ տարածութիւնը, որ կը մնայ իմ և ծընընդավայրիս միջեւ, երբ կարմիր երիվար մը, փոշիի ամպեր ետին ձգած, սուբալով դէպի մեզ կուգայ: Անմիջապէս ոտքի կ'ելլեմ զայն դիմաւորելու: Հասած է արդէն անիկա և քրտնաթոր վիճակ մը ունի: Աճապարանքով կ'իջնէ վար, երբ ես պարտասած ձիուն սանձէն բռնած՝ կառաջնորդեմ գոմ, կեր և ջուր տալու:

Սիրտս ինծի կ'ըսէ թէ, տարօրինակ լուր մը կայ, այս անձանօթ հեծեալին՝ շրթներուն կապտուած: Հետաքրքրութիւնս զիս կը տանի անոնց գրան: Բանալիի ծակէն կը տեսնեմ ու մտիկ կընեմ զիրենք: Բովէ քով և մոռյլ դէմքերով, մանաւանդ նորեկը ջղային և ան-

համբեր, թաշկինակով ձակատը սրբելէ վերջ, կ'աւելցընէ՝ ծերուկին մարմրող աչքերուն խորքին իյնալով.

— Վա՛յ քեզ, Յլա աղջի՛կ, միւսիւմ ըլլալը մե՞ղք էր քի... .

— Ինչպէ՛ս, ինչպէ՞ս եղաւ այդ, խնդրե՛մ, պատմէ՛ ամբողջ. մե՛ղք, մե՛ղք եղաւ... .

— Գիշերուան ուշ ատեն էր և մեր գեղի հարսնեւորները հազիւ հրաժեշտ տուած, նորեկ հարսը, օգնական կնկայ մը հետ սափորով, կ'երթայ իրենց «նամազ»ին առաջին խէրով ջուրը բերել հորէն, որ ձիչդ դրան առջեւն է.

— Է՛, յետո՛յ.

— Մենք դեռ դրան սեմին կեցած, կը դիտէինք անոր չքնաղ ու հպարտ քալուածքը, հազա՛ր երանի տալով զայն վայելողին. բաւական հեռու, երբ հորին գլուխը կը տեսնենք անոր ձերմակ ստուերը մոմի նըման անչա՛րժ ու լուռ, ապա երկու ձեռքեր, որոնք մութին մէջ կը շարժին քանի մը հեղ, աղօթողի ձեւին մէջ... . յետոյ, քանի մը բռնե՛ր և ահա ջուրին տըխրագին ձայնը, որ իր մէջ կուլ կուտար, այն գիշերուան գեղանի հարսը՝ ողջ գեղին.

— Հաբա՛ւ եղա՛ւ, ջանը՛ս, հաբա՛ւ եղաւ ասիկա. ծերուկին անզգայ սիրտն է խօսողը:

— Նալլա՛ք այն գեղեցկութեան, նալլա՛ք այն բարտիի նման բարձր բօյին, հազա՛ր նալլա՛ք.

Այլեւս բան չէի լսեր, քաշուեր էի հեռու, իմ սուվորական տեղս, ու կը մտածէի գիտնականի մը խորութեամբ կարծես: Դեռ երէկ, հոս էր անիկայ, կեցած իր հարսնեւորի անմեղ հազուստին մէջ ու կը խօսէր մեզ, իր առժամեայ մեկնումին համար որ հիմայ կը հասկնամ թէ՛ անիկայ յաւիտենական բաժանումն է եղեր այս աշխարհիս գձուց և անցաւոր փառքերէն:

Ո՛րքան բարութիւն, Հրանո՛ւշ, դո՛ւն աղօթե՛ր ես

այդ անհաւատներուն առջեւ բազկատարած հրեշտակի մը հանդոյն, սրտիդ խորերէն արձակելով քու միակ ժառանգութիւնդ և սուրբ կտակդ:

— Աղատութիւնն աքսորեալ ազգիս, մահամերձ քոյրերուս և եղբայրներուս առողջութիւնն և իմ մեղքերուս դողութիւնն, ո՛վ Աստուած:

Մինչ հեռաւոր ճամբայներէն, բեռցուած սայլերուն եղերական կանչերը կուգային ականջիս, ես տակաւին նստած իմ տեղս, արեւին մէջ, մօտաւոր հրեշտակի մը մահը կ'ողբայի:

Երջանկութեան հրեշտակին մէկ թեւը կտորած կ'ըլլայ...

Կ. Պոլիս:

Տարիներ անցան, այն եղերական թուականնեւրուն վրայ և օր մը նորէն, մեր հայրենիքի կանաչ արեւը տեսանք, պանդուխտ այս երկինքներուն վրայ, աւելի ծեր և սգաւոր իր քալուածքով, դէպի Վոսփորի վերջալոյսին: Անապատներուն մէջ, օրհասականի իրենց վերջին շունչին հասած խլեակները, նորէն կեանք առին և եկան նոր երկրի մը լոյսերուն մէջ բանալ իրենց տառապածի աչքերը:

Բախտը մենք շինեցինք, չթողուցինք որ ան իր կոյր գաւազանով մեր ճակատագրին հետ խաղայ և գիշեր մը, մեր աղաին ձին հանելով դուրս, գաղտնի, Սիրանուշն ու ես հազար փորձանքներ կտրելով կը հասնինք այս մայրաքաղաքը, իյնալու հազարներու այն փունջին մէջ որ կը կապուի «որբանոցի» դերձանով:

Հիմայ, երբ վայրկեան մը կը վերյիշեմ այն դժբնագակ ժամերը ուր անցաւ իմ անգիտակից մանկութիւնը ու մեծ զրկանքներով լի, հիմայ, երբ միտքս կ'իյնայ բոլոր ծանօթներուս մահերն ու կորուստները, կատարուած հրաշք մը կուգայ ինձ իմ վերապրումս և անգամ մա՛լ ողջունելու այս՝ առիթը, վաղնջական բուր սիրելիներով:

Արեւոտ օր մըն է այն, Թաքսիմի մեծ պարտէզին մէջ, դէմ առ դէմ նստեր ենք Սիրանուշի հետ՝ սեղա-

նի մը շուրջ և կը դիտենք բազմամարդ այս զբօսա-  
վայրին մեռնող ժամերը:

Ամէն կողմ զարդարուած է, զանազան մեծ տէ-  
րութեանց զբօսներով և անոնց կարգին քանի մը հատ  
խոշոր հայկական եռագոյններ կը ծփան և անոնց հը-  
մայիչ ծալքերուն ներքեւ հաւաքուեր են անթիւ հայ-  
րենակիցներ, հարուստէն մինչեւ յետին աղքատը:

Անո՛նք, եկեր են այսօր հոս, Հայաստանի Անկա-  
խութեան առաջին մեծ տարեդարձը տօնելու. եկեր են  
անոնք հոս, անցեալի ահաւոր դառնութիւնները մոռ-  
նալ վայրկեան մը և միլիոն մը նահատակներուն ա-  
րիւնով գնուած Ազատութեան խանդավառ երգերը բար-  
ձրրացնել: Մանաւանդ եկեր են հոս, մեր ուրախութե-  
ան արցունքները թափել Եռագոյնին ներքեւ որուն  
մէջ ամփոփուած են մեր դարաւոր ցաւերն ու երազ-  
ները:

Մինչդեռ, ժպտուն աչքերով մենք այս պատկեր-  
ները կը դիտէինք, անդին խումբ մը երիտասարդներ  
հայրենասիրական երգերով օղբ կը լեցնէին զանազան  
ոգեւորութեամբ:

Աւելի սրտերնուն զարնուածներ, կ'երթային Ե-  
ռագոյնին ծայրերը բռնելով կը համբուրէին և կ'աղօ-  
թէին: Ոմանք ալ կուլային ի տես այս պատկերներուն  
քանի որ իրենց բեկորներուն անփոխարինելի կորուստ-  
ներովը աւելի՛ կը սրբանար այս Ազատութիւնը և Հայ  
Դրօշը: 2 տարիներ անցեր էին մեր փախուստէն ի վեր  
և անցեալի այդ զազրելի պատկերները ընդմիջտ մոռ-  
ցուած էին կարծես, մանաւանդ հիմայ, երբ մեր Հայ-  
րենիքի սրբազան ազատութեան տօնին մասնակից  
էինք:

Հայրենաբաղձութեան ի՛նչ ժամեր էին անոնք, երբ  
հեռաւոր Հայաստանէն եկած ափ մը հող կամ գաւաթ  
մը ջուրը, տասնեակ ոսկիներու փոխարէն կը յափշտա-

կուէր այն օրերուն, երնէ՛կ, հաղա՛ր չերնէկ հին ա-  
րեւնեւրուն:

— Երուանդ, ո՞րն է Հայոց դրօշակը, սա կար-  
մի՛ր, կապոյտ նարնջագոյնը՞, ուր կ'երգեն տղաք.

— Քա՛... դեռ չե՞ս գիտեր Հայոց դրօշակը...  
չե՛ս ամչնար, աղջի՛կ...

Հազիւ կ'աւարտեմ խօսքս երբ Սիրանուշի դէմ-  
քին այլայլուած զիս կը վախցընէ մեծապէս, ան մար-  
մընով ինձ կը փաթթուի մէկէն, գլուխը կուրծքիս  
և թեւերուս մէջ պահուելով, կը կոչէ լալագին.

— Երուանդ, Երուանդ, պահէ՛ զիս, ճանի՛կդ  
ուտեմ... ան է, կուգայ կոր, պահէ՛ զիս եղբայր...

Սարսափած ետիս կը դառնամ: Ո՞վ կրնար ըլլալ,  
այս հանդիսաւոր պահուն մեզ այս աստիճան տագնա-  
պող: Զարմանք... ձերմակ դէմք մը կարմիր Ֆեֆի  
մը տակ: Ամբողջ անցեալ մը երեւակայութեանս կու-  
գայ և կը կարմրիմ յանցաւոր տղու մը պէս: Կ'զգամ  
թէ անծանօթ ձեռք մը ուսս կը ծեծէ.

— Օղլա՛ւմ, Օսմա՛ն, ճանչցա՛ր զիս... ա՛հ, ո՛ր-  
քան կարօտցայ ձե՛զ...

Մուստաֆան է, մեր վաղեմի չար աղան. բայց  
ուրկէ՛ ո՛ւր, այսքան մշուշապատ տարիներու մէջէն  
եկած հոս և աւելի՛ սարսափելին ճիշդ մեր քով: Կար-  
ծես աւելի երիտասարդ է հիմայ և ժպիտը մեծ.

Շփոթութիւնս փարատելով և խրախուսուելով  
չորսդիս հնչող երգերէն և մէկ կողմանէ Սիրանուշը  
կարգի բերելով, կը կոչեմ.

— Նայէ՛, Մուստաֆա՛, ասկէ վերջ իմ անունս  
Օսման չէ՛, այլ՝ Երուանդ, անցան այն օրերը, երբ  
մենք քու տանդ շուններն էինք, հասկցա՞ր...

Քիչ մը անդին, Անգլիացի երկու ոստիկաններ կը  
չրջէին.

— Ներեցէ՛ք ինձ, զաւակս Երուանդ... ի՞նչու

կուլայ Միրանուշը տակաւին, ինձ նայէ՛, անո՛ւշ աղ-  
ջի՛կս, նայէ՛, ինչե՛ր բերեր եմ քեզ... և գրպանէն  
հինգ կարմիր ափին մէջ երկարելով.

— Առէ՛ք ասոնք և ծախսեցէ՛ք. ես ձեզի շատո՛նց  
ներած եմ ձեր փախուստին համար.

Այն ատեն փոխ վրէժի ահաւոր զգացում մը  
պոռթկաց մէջս և այդ կարմիրները որոնք տեսայ,  
գուցէ զժբախտ Հրանուշի վաճառումին աւելցուքններն  
էին, զոր մեզ կ'երկարէր զողջողագին՝ իր ձեռքով.

— Ո՛չ, չենք առնե՛ր, չե՛նք առներ զանոնք,  
Մուստաֆա՛, անոնց վրայէն, Հրանուշի անմեղ արիւ-  
նը կը խօսի մեզ, ե՛տ, գրպանդ դի՛ր զանոնք. Սյսօր  
Հայաստանի անկախութեան տօնն է. կը տեսնե՛ս  
Հայկական Դրօշակները, կը լսե՛ս տղաքը որ կ'երգեն.

«Արձակեմք գնդակ, հեռուէն մօտեմ,  
քո՛ղ սառսի Սուլթան երլօրդ պալատեմ...»

Դիտե՛ց երկար, ձեռքին մին, այն որ դրամը բռ-  
նած էր, գրպանին մէջ, աչքերը սեւեռուած հեռաւոր  
բաներուն, երկա՛ր, շատ երկա՛ր դիտեց օգտուելով իմ  
լռութենէս որ ծագում կ'առնէր իմ անօրինակ յուզ-  
մունքէս: Աչքիս առջեւ շարժապատկերի մը նման,  
կ'անցնին աքսորի բոլոր տեսարանները, իրարմէ զար-  
հուրելի:

Կ'ուզէր մեկնիլ, բայց անձանօթ ուժ մը՝ զայն  
խաչած էր գետնին և այն ատեն կը տեսնեմ իր ծե-  
րոյթի աչքերուն մէջ երկու կաթիլներ, որոնք իր չոր  
այտերուն վրայ, լճակի մը պէս կ'անշարժանան: Զրդ-  
ջումի յետադարձ արցունքնե՞ր էին ասոնք, թէ ոչ նոր  
վրէժի մը ժանտալից ուխտը:

— Օղլո՛ւմ Երուանդ, իմ այս ձերմակ մազերուս  
խնայէ՛, նայէ տարիքս առած եմ արդէն և մէկ աչքս,

գերեզմանիս կը նայի. մի՛ նախատեր քու մեծ հայրի-  
կըդ որ տուրիայի՞ն մէկ ծայրէն միւսը անցնելով, եկած  
է ձեզմով իր կարօտը առնել. ներեցէ՛ք ինձ, անուշ  
դաւակնե՛րս...

— Կը յիշե՛ս Հրանուշը, Մուստաֆա՛, կը յիշե՛ս  
զոր անխղճաբա՛ր ծախսիր. կը յիշե՛ս ինչպէս ան  
ինքզինքը հորին մէջ նետելով անձնասպան եղաւ, կը  
յիշես, չէ՞...:

— Մի՛ չարչարեր դիս, օղլո՛ւմ այդպէս, պիտի  
մեռցնես ցաւէս:

— Արժանի՛ ես մեռնելու, չար ծերունի՛, և եթէ  
այդ անմեղ աղջկան արիւնը խղճմտանքդ կը չարչրկէ՛,  
պէ՛տք է ինքզինքդ դարնես դուն...:

Ու գլխիկոր, նորէն այդ վաղեմի Ֆեսին ներքեւ,  
կը հեռանայ անիկայ, առանց իր վերջին «մնաք բա-  
րովի և տխո՛ւր, առանց իր չուրջի հանդիսութիւննե-  
րը տեսնելու, առանց լսելու, առանց խօսելու կ'եր-  
թայ անիկայ, հեռաւո՛ր իր երկիրը գուցէ.

Հեռուն, ամբոխին մէջէն մէկը կը խօսի ուժգին  
ձայնով.

— Ալ հերի՛ք լաք, վերապրող հայրենակիցնե՛ր,  
սրբեցէ՛ք ձեր արցունքները, նայեցէ՛ք հեռո՛ւն, Մա-  
սիսի կատարներէն ահա կը ծագի Հայաստանի ազա-  
տութեան սրբազան արշալոյսը...:

Հեռաւո՛ր ճրագ մը կը վառի դեռ...

Բոլոր այս դէպքերը պատմեր էի ընկերներուս, որոնք այն ատենները խելահաս և իրենց պարտակա նութեան գիտակից երիտասարդներ էին:

Օր մը երբ Իզմիտի ծովեզեայ անտէր ափերը այցելելու առիթը ունենաք, դիտեցէ՛ք, հոն հսկայ ընկուզենի մը մինչեւ այսօր դեռ կը կանգնի գուցէ, ճիշդ անոր բունին վրայ, դանակով փորուած են սատողերը. «Հանգի՛ս հեռաւո՛ր ոսկորներուդ, Հրանու՛ւ»...: Աւելի վար, անընթեռնելի սա գիրերը «Հայ երիտասարդին վրեժը»:

Այս բարձր և մենաւոր խարակներուն վրայէն դիակ մը ծով նետած են. Հայ աղջկայ մը արիւնով թըրջուած հինգ կարմիրներ տակաւին գրպանին մէջ: Ո՛րքան նմանութիւն երկու մահերու միջեւ. հեռաւոր հոր մը իր «նամագ»ի ջուրերով մեղաւոր և հոս, անծիր ծով մը մերժուած ոսկիներուն գնովը յանցաւոր:

Հո՛ն, արեւին տակ, ընկուզենին իր արծուային թեւերը վայրի հովերուն բացած, կը շաչէ՛ յաճախ, մահերգի մը պէս.

Հո՛ն, գիշերները խոշո՛ր, խոշո՛ր ալիքներ ժայռերու մէջքերուն կը գալարուին ոռնալով՝ «փա՛ռք, փա՛ռք»...:

\* \* \*

Կիջնեն ստուերները մեծ քաղաքին վրայ և մեր որբանոցի զոյգ շէնքերը, կամաց-կամաց միջոցին զըրկին մէջ կը հալին աղօտակի: Հեռո՛ւն, բակին մէջ

դեռ կը խաղան տղաք և անոնց ճիչերը, վայրկեան մը կուգան յիշողութեանս մէջ, անցեալի դառն պատկերները մոռցնել ինձ: Հարիւրաւոր որբեր ամէն տեսակէ, մեծ սպանդին մնացորդները, որոնք ատեն մը, երբ իրենց իմաստութեան ակաւները բուսնին, անկասկած թէ՛ պիտի խաչեն ոճիրին բոլոր բազուկները:

Կը հնչէ զանգակը նինջի: Թախծոտ իր ելեւէջնեւրուն մէջ, մեռելատան մը սուգին չափ: Ի՞նչու այս տարօրինակ տխրութիւնը ղէմքիս, ի՞նչու այս աչքերը զժխեմ: Եւ դարձեալ միտքս կ'իյնան, չէրքէզական գիւղերը իրենց սարսափելի և անուշ կողմերով:

Գիշեր է դուրսը, անյուսին գիշե՛ր և դեղի ճամբաներէն կը փախչիմ կարծես հեռու, այնքա՛ն հեռու, ուր այլեւս չհասնին ետեւէս անգութ ձեռքեր և չար ձայներ: Ինկած եմ մենաւոր դաշտերուն մէջ մթին և կաճապարեմ հասնիլ բարի քաղաք մը ուր զիս ա նօթի չեն ձգեր, չեն ծեծեր ու հօր մը պէս կը ժպտին: Կը քալեմ միտքս հազար ու մէկ մտածումներով պաշարուած:

— Ո՛ւր կ'երթաս հէ՛յ, երիտասարդ բարեկա՛մ.

Տէրվիչի մը ձայնն է որ կուգայ փլուած պատի մը տակէն.

— Ես կերթամ երջանկութեան այն գիւղը, ուր մեղրը գետի պէս կը հոսի և մարդիկ սիրոյ աւազաններուն մէջ կը լոքնան ժպիտի մը չափ բարի:

— Օ՛, թշուառ տղա՛ս, ես ալ երբ մանուկ էի քեզի նման, շա՛տ բաներ երազեցի և հիմայ երբ մազերուս մէջ ինկած է ճերմակ թելերը մահուան գիտեմ թէ ի՛նչ է այս աշխարհին դարտերը:

— Ինչպէ՛ս...:

— Այո՛, դաւա՛կս, երջանկութիւն չկայ բնա՛ւ, կը տեսնե՞ս սա կուժը լեցուած արտասուների կաթիլներով պսոնք մէկ գիշերուան մէջ ժողուեր եմ երջա-

նիկ կարծուած տուները մէկ առ մէկ ման գալով: Ես  
ա՛յնքան տառապած եմ, զաւա՛կս որ, հիմայ կ'ըսկսիմ  
ջանկութենէս արտասուել:

Այս սրտակեղէք յայտնութիւններէն խոյս տուի  
սարսափած. հապճեպօրէն շարունակեցի ճամբաս մի-  
նակ ձգելով սեքվիթը իր աւերակ պատերուն ներքեւ:  
Մէկէն կը տեսնեմ որ վազող կայ ետեւէս սպառնա-  
լով:

— Վա՛յ քեզ, անիծապա՛տ ցեղ, ո՞ւր կը փախ-  
չիս. և զէնքերով և դաշոյններով մերկ, հեւագին,  
հովի նման սուբալով, կ'արշաւէ Մուստաֆան. հեռուն,  
առջիս կը տարածուի թրքական գերեզմանոցի ճերմակ  
քարերուն անհամար ներկայութիւնը: Ինքու ու ճի-  
նքու հայրենիքը, զիչերուան սեւ վերարկուն մէջ  
օրօրուն: Իրաւամբ սպիտակ ստուերներ ճանկերնին  
բացած՝ կը քալին ինձ: Մեռելատան ծառերուն անօրի-  
նակ ձայները աւելի՛ կը խռովեն զիս: Պոռալով կը  
վազեմ դաշտերը լալազին.

— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն...

Ահա հասան անոնք ետեւէս, պիտի ըռնեն, երկա-  
րեր են իրենց ճանկերը վզիս և հազիւ վերջին ճիչս  
արձակելու ուժ կ'ունենամ՝ երբ անոնք արդէն կը  
սեղմեն կոկորդս.

— Մայրի՛կ, մայրի՛կ...

Եւ ընդոստ կը բանամ աչքերս այս ահաւոր երա-  
զէն ու կը տեսնեմ մեր որբանոցի գիչերապահ մայրի-  
կը՝ մահճակալիս առջեւ ծունկի եկած կ'աղօթէ:

— Մի՛ վախնար, Երուանդ, ես հոս եմ, զի՞ս կը  
կանչէիր. աջիդ դարձիր, զաւա՛կս, բան չկայ, և կը  
ըռնեմ անոր ձեռքը և կը տանիմ կուրծքիս տակ ուր  
սիրտս շատ արագ և ուժգին կը փափախէր, պայթելու  
աստիճան:

— Հոս ե՞ս, անուշ մայրի՛կ, ո՞ւր էիր քիչ առաջ,  
զիս կը խեղդէին կոր... կ'զգամ որ խկապէս լացեր  
եմ և բարձս ամբողջութեամբ թրջուած իմ որբ ար-  
ցունքներովս: Հինգ բոպէի մէջ ես ապրեցայ այլաբար-  
հի է՛ն դժբախտ և է՛ն երջանիկ վայրկեանները:

— Խաչ մը հանէ՛ ճակախդ, զաւա՛կս, ալ սատա-  
նան չի մօտենար քեզ... և քնացիր անո՛ւշ անո՛ւշ...

Ո՛րքան նմանութիւն մը լուսահոգի մօրս, կա-  
պուած դեռ հին աւանդութեանց. երբ գիչերապահուի-  
ին դեռ ծնրադրած արտասուազին կ'աղօթէր սնարիս  
քով զիս քուն կարծելով, ես տակաւին կ'անդրադառ-  
նայի իմ երազին շուրջ. մինչ անդին ննջող տղոց  
չնջառութեան ձայները կուգային ականջիս, երբեմն  
անսովոր շուղներ, գիչերաչըջիկներու պտոյտներ,  
գալարուող ճիչե՛ր, որոնց պատասխանատուն մեր Մեծ  
Եղերերգութիւնն է: — Անառա՛կ զաւակը աքսորին —:

Դուրսը, մայիսի հովերը պզտիկ երգերով կ'անց-  
նին: Պատուհանիս մէջ լուսինը իր սգաւոր դէմքը կա-  
խած, կարծես առաւօտեան աստղին կը մօտենայ:

## ՎԵՐՉ

300

ՀՀ Ազգային գրադարան



NL0354430

110

60.940

ԳԻՆ՝ 5 Երանի

8